

քահանայն, որ կ'ըսէ. «Յիշատակարան... Յիշեցէք... զԿոստանդնուպօլսեցի զերիցս երանեալ Տէրն Սարգիս Շնորհալից Աստուածաբանութեան քաջ բարունապետն: Որ մեծաւ յուսով եւ ինքնայօժար կամօք եւ եռափափագ սրտիւ՝ եւ ջերմ սիրով ցանկացաւ եւ ետուր գրել զսա՝ աստուածային մարգարտիս՝ զոր Տէր Աստուած բարեաւ վայելել տացէ ընդ երկայն աւուրբք: Հուսկ յետոյ՝ անանցն ժամանեսցէ ընդ երջանիկ առաքելոց՝ եւ երանեալ հայրապետացն դասաւորեսցէ: Ի թուոյն փրկչին (դասուի ինչ) եւ ի թուահաշուութեանս մերում ՌՃԶԹ: Չեռամբ կեսարացի մեղսամած... Աստուածատուր երէցս... յիշեցէք... զվերոյգրեցեալ զքաջ մեծ բարունապետն՝ մեր, որ դառնացեալ ժամանակիս բերմանց՝ ներքին եւ արտաքին կրից, զոր Տէր Յիսուս ջահանշիջանելի պահեսցէ ընդդէմ հերձուածողաց եւ հերետիկոսաց, անսայթաքելի եւ անդրդուելի ի ծոց սուրբ եկեղեցեաց եւ ի պարծանս հայաստանեաց...»

Գաւթիթեան Սեր. Վ., Աբրահամ Արծիւեանի՝ Կիլիկիոյ հայ կաթողիկեայ Առաջին կաթողիկոսին իտալերէն կենսագրութեան մէջ (Գահիրէ 1862, էջ 68) կը յիշէ, որ Սարգիս Վ. իբր 1727ին Աբրահամ Արծիւեանին, որ այն ատեն Բերիոյ (Հալէպ) Աբքեպիսկոպոսն էր, հաւատոյ դաւանութիւնը տուած ըլլայ: Նոյն դէպքը կը յիշեն Ուղուրլեան Մեսրոպ Վ. (անդ, էջ 134) իբր 1740էն ետեւ հանդիպած ի Լիբանան, եւ Աղեքսանդրեան Անդր. Վ. (անդ,